ՀՀ ԳԱԱ ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԳՅՈՒՄՐՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՑԱՂԻ ԹԱՆԳԱՐԱՆ

http://www.shirakcenter.sci.am, https://merkurov.am/

«ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»

հանրապետական 4-րդ գիտաժողով՝ նվիրված

Լենինականի անվանակոչության 100-ամյակին

16 օգոստոսի 2024թ. Գյումրի

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԱԼՍՏՅԱՆ Հ.
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
hasmikgalstyan1979@gmail.com

ՇԻՐԱԿԻ ՋՐԱՆՑՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ. ԱՐԽԻՎԱՅԻՆ ԵՎ ԴԱՇՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

1922-1925թթ. Շիրակի ջրանցքի կառուցումն աննախադեպ երևույթ էր ոչ միայն Հայաստանի, այլև նորաստեղծ Խորհրդային միության համար: Այս կառույցով հիմք դրվեց Խորհրդային Հայաստանի արհեստական ոռոգման համակարգի ձևավորմանը, ինչն էլ նպաստեց երկրագործական մշակույթի զարգացմանը: Ջրանցքի կառուցմամբ պայմանավորված՝ լուծվեցին որոշ տնտեսական, մշակութային, էկոլոգիական և այլ խնդիրներ, որոնցից առաջնահերթը Լենինական քաղաքի էլեկտրաֆիկացիան էր, հարակից տարածքների կանաչապատումը, անտառաշերտերի ստեղծումը և այլն: 1924 թ. Լենինի մահից հետո Կենտգործկոմին կից ստեղծվում է Լենինի հիշատակը հավերժացնող հանձնաժողով [ՀԱԱ, ֆոնդ 112, ցուցակ1, 1921-1938թթ, գործ 163, 164, 165] և կարևորագույն հիմնարկ-ձեռնարկություններ անվանակոչվում են վերջինիս անունով: 1925թ. հունիսի 21-ի երեկոյան տեղի է ունենում Խորհրդային Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեի հանդիսավոր նիստը՝ Լենինականի և գավառային ու քաղաքային գործադիր կոմիտեների հետ համատեղ: Այս նիստում որոշում է կայացվում Շիրակի ջրանցքին տալ Լենինի անունը: 1925թ. հունիսի 25-ի որոշմամբ կենտգործկոմի նախագահությունը հաստատվում է այդ որոշումը: Շիրակի ջրանցքի կառուցումն իր արտացոլումն է գտել ոչ միայն

ժամանակի գրականության, այլև բանահյուսության մեջ: Համադրելով Շիրակի ջրանցքի կառուցմանն առնչվող Հայաստանի ազգային արխիվի Հայջրտնտեսության վարչության ֆոնդում պահվող փաստաթղթերը և մեր դաշտային նյութերը՝ տեսնում ենք, որ մեր գրառած որոշ իրապատում զրույցներ բանահյուսական հատկանիշներ են ձեռք բերել, իսկ զրույցների մեծ մասը համապատասխանում է ախիվներում պահվող փաստաթղթային նյութին: Սույն զեկուցման նպատակն է ցույց տալ Շիրակի ջրանցքի կառուցման ընթացքին առնչվող արխիվային – փաստաթղթային տվյալների և բանահյուսական-ազգագրական նյութերի արդի գրառումների ընդհանրություններն ու նմանությունները՝ տնտեսական ու մշակութային գործընթացների համատեքստում:

ԲԱԶԵՅԱՆ Կ.
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
bazeyan@60yandex.ru

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՆՈՐ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1920-1940-ԱԿԱՆ ԹԹ.

Ալեքսանդրապոլում, աշխատանքի ավանդական գենդերային բաժանման համաձայն, կանանց գործունեությունը սահմանափակված էր ընտանեկան, այսպես կոչված, «մասնավոր» արտադրության շրջանակում, իսկ տղամարդկանցը, որոնք համարվում էին ընտանիքի նյութական բարեկեցության ապահովողները, արտա-

քին՝ հանրային-հասարակական ոլորտը կամ արհեստագործությունը: Այդպիսով, կանայք զբաղված էին միայն տնայնագործական բնույթ ունեցող աշխատանքներում: Չնայած ավանդապահ ալեքպոլցի տղամարդու համար շատ ամոթ էր, որ կնոջ, հարսի կամ աղջկա բերած փողով ապրի, սակայն արդեն 19-րդ դարի երկրորդ կեսից ամուսնացած կինը սկսեց աշխատել որպես ուսուցչուհի կամ կար ու ձևի, ասեղնագործության, կարպետագործության վարպետ: Իսկ այրի կանայք, որոնք որևէ ձեռարվեստի չէին տիրապետում, իրենց զավակներին պահելու համար ուսնորների տանը լվացք էին անում կամ հաց թխում: Խորհրդային կարգերի հաստատումը խորքային փոփոխություններ առաջացրեց Լենինականի ավանդական մշակույթի բոլոր ոլորտներում, այդ թվում նաև աշխատանքային գործունեության մեջ: Ինդուստրացման քաղաքականության կենսագործումը, որի արդյունքում քաղաքում հիմնվեցին բազմաթիվ գործարաններ, առաջ բերեց մեծ քանակությամբ բանվորների պահանջարկ: Այսպես՝ Տեքստիլ գործարանում աշխատելու համար անհրաժեշտ էին կին բանվորներ մի քանի մասնագիտությունների գծով (գործվածքի, մանարանի, տրիկոտաժի մեքենավար-ջուլհակներ և այլք): Այս խնդիրը լուծելու համար Ռուսաստանից հրավիրվում էին մասնագետներ, որոնք վերապատրաստում էին տեղացիներին, ինչպես նաև բացվում էին ուսումնական հաստատություններ, որտեղ կանայք ու աղջիկները ստանում էին համապատասխան որակավորում: Սակայն արտադրական գործունեության մեջ կանանց ներգրավումը դժվարությամբ էր իրականացվում, քանի որ ընտանիքը դեմ էր դուրս գալիս: Սկզբնական շրջանում այդ բացը լրացվում էր որբանոցների սաների, արևմտահայ գաղթականների և Ռուսաստանից եկածների կողմից, որոնք դանդաղ, բայց էականորեն ազդեցին հին կարծրատիպերի քայքայման վրա՝ իրենց ավելի ազատ ու անկաշկանդ կեն-

սակերպով: Զեկուցման մեջ ներկայացվելու են հիշյալ գործընթացները արխիվային նյութերի ու ժամանակի պարբերական մամուլի հրապարակումների վերլուծության հիման վրա:

ԲՈՅԱՋՅԱՆ Ա.
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
a.boyajyan@mail.ru

ԼԵՆԻՆԱԿԱՆ-ԳՅՈՒՄՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ 1924-2024ԹԹ.

Զեկուցման մեջ ներկայացվելու է քաղաքի բնակչության թվի շարժընթացը: Վերջին հարյուր տարվա ընթացքում քաղաքի բնակչության թիվը մշտապես փոփոխվել է: Այդ առումով մեր ուսումնասիրության խնդիրներն են ցույց տալ բնակչության բնական վերարտադրության ընթացքը, բացահայտել այդ փոփոխության վրա ազդող գործոնները: Ներկայացվելու է նաև ծնելիության, մահացության և բնական աճի շարժընթացը: Բնակչության ներգաղթի և արտագաղթի տեմպերն ինչպիսի՛ սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական ազդեցություն են ունեցել բնակչության թվի փոփոխության վրա: Ներկայացվելու է նաև քաղաքի բնակչության ժողովրդագրական անցման փուլերը: Վերլուծելու են քաղաքի բնակչության սեռատարիքային, ընտանեկան, սոցիալական, էթնիկական և կրոնական կազմը: Փորձելու ենք ցույց տալ ժողովրդագրական փոփոխություններն ինչպիսի՛ ազդեցություն են ունեցել հա-

սարակական կյանքի ոլորտների վրա: Ներկայացվելու է նաև քաղաքի բնակչության ամուսնությունների և ամուսնալուծությունների ընթացքը: Հետազոտության շրջանակներում համադրվել են պաշտոնական վիճակագրական տվյալների հավաքման, համեմատական, քանակական, որակական և վերլուծական մեթոդները: Ներկայացվող ժամակաշրջանում քաղաքում գրանցվել են բնակչության թվի շեշտակի աճի և անկման տարիներ: Սույն զեկուցման մեջ փորձելու ենք պարզել դրա շարժառիթները և դրդապատճառները: Ներկայացնելու ենք ներկայիս ժողովրդագրական հիմնախնդիրներն ու մարտահրավերները՝ ի հավելումն աղյուսակներ, գծապատկերներ: Ցույց է տրվելու, թե քաղաքի բնակչության թվի աճն ինչպիսի՛ ազդեցություն է ունեցել քաղաքի տարածքի մեծացման վրա: Հետխորհրդային տարիներին մարզի, մասնավորապես, Գյումրու բնակչության զանգվածային արտագաղթը լուրջ ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ է առաջացրել: Այդ առումով տարածքային զարգացման անհամաչափությունները ՀՀ-ում, այդ թվում՝ Շիրակի մարզում, սկսել են խորանալ տնտեսական ճգնաժամին զուգընթաց՝ 1990-ական թվականներից, և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաք Երևանի ագլոմերացիայի դերի և նշանակության աճով, որի արդյունքում կենսամակարդակի տարբերությունը Երևանի և ՀՀ մարզերի միջև անընդհատ աճել է՝ վերջին տարիներին հասնելով մտահոգիչ չափերի: Կհամեմատենք Լենինական-Գյումրու և Շիրակի մարզի բնակչության թվի փոփոխության ընթացքը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ.Հ.
Արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
hasmik.har@mail.ru

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ ԵՐԱԺՇՏԱԳԵՏ Հ. ԱՓԻՆՅԱՆԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Հ. Ափինյանը ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադիր գիտնականներից մեկն է, որն իր հոգևոր և մասնագիտական բոլոր կարողությունները նվիրաբերեց հայ ազգային երաժշտության և, մասնավորաբար, Շիրակի ժողովրդական և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտական նմուշների գրառման, համակարգման և ուսումնասիրման գործին: Հ.Ափինյանի հեղինակած շուրջ երկու տասնյակ հոդվածներն ու հրապարակումները արծարծում են ինչպես Շիրակի, այնպես էլ Լենինականի քաղաքային ժողովրդական ծիսական երգերի, դրանց երաժշտաբանահյուսական նկարագրի, ժողովրդական կատարողական արվեստի ու նվագարանաշինության առանձնահատկությունների, օրորոցային երգերի որոշ հորինվածքային-տաղաչափական խնդիրների, արդի երաժշտական բանահյուսության գիտամեթոդական ուսումնասիրության կարևոր հարցեր: Նրա դիտարկմամբ, արդի Շիրակի երաժշտական բանահյուսությունն ինքնատիպ մի համաձուլվածք է երգամտածողության մեջ գեղարվեստական կերպարային հին և նոր շերտերի համադրությամբ, ժանրային գոյացումների ճկուն համակարգով: ՇՀՀ կենտրոնի երաժշտագիտական ֆոնդերում պահվող Հ.Ափինյանի գրառած օրինակների մեջ մեծ քանակություն են կազմում պարերգերը, ավելի տարածված են աշուղական երգերը, սակավ են դարձել երգվող հատվածներով

հեքիաթների, սիրավեպերի կատարումները: Այս առումով, նա հաճախ նշում էր, որ ավանդական որոշ երգատեսակներն աստիճանաբար դուրս են մղվել կենցաղից և քիչ-քիչ մոռացության ենթարկվել: Մեծ մասամբ պատճառներն օբյեկտիվ են՝ պայմանավորված ժամանակի գործոնով: Կենդանի խոսակցական լեզվի մեջ տեղի ունեցող փոփոխությունները բնօրրանից ժառանգված բարբառների համահարթեցման պատճառ են դարձել, որն էլ իր հերթին փոփոխություններ է մտցրել երաժշտական ինտոնացիոն ոլորտի մեջ: Քաղաքային և գյուղական երգերի կատարման լսարանների միջև տարբերությունն աստիճանաբար նվազել է, ուստի այս պատճառով երգային բանահյուսության մեջ նկատելի է դարձել անհատական ստեղծագործության դերը: Անդրադառնալով քաղաքային ծիսական երգերի ու նվագների տիպաբանական առանձնահատկություններին՝ Հ. Ափինյանը նկատել է, որ, օրինակ, հարսանեկան արարողակարգի ավանդական պահպանման հիմքով է պայմանավորվել այդ երգերի ու նվագների շարքի համեմատական կայունությունը: Լենինականում ստեղծագործող շատ երաժիշտներ, որոնք ալեքսանդրապոլցի աշուղների, սազանդարների ու զուռնաչիների կատարողական ավանդույթների լավագույն կրողներն էին, ոչ միայն տեղի ու հարակից գյուղերի, այլև Հայաստանի ու նրա սահմաններից դուրս գտնվող ուրիշ շատ քաղաքների տոնախմբություններում պատվավոր և ցանկալի մասնակիցներ էին: Հ. Ափինյանի բանահավաքչական գործունեության արդյունքում ձևավորվել է ժողովրդական երգերի մի պատկառելի հավաքածու, որի ուսումնասիրության և գիտական հրատարակության աշխատանքները կարևոր նպաստ կունենան նաև Լենինականի քաղաքային ժողովրդական երաժշտական ստեղծագործության արժեքավորման գործում:

ԱՂԱՆՅԱՆ Գ.
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
aghanyan@mail.ru

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՍԿԵՐԻՉ-ԱՐԾԱԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ XIXԴ.- XXԴ.ՍԿԶԲԻՆ (ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ)

XIX-XXդդ. հայկական ոսկերչությունը, շարունակելով նախորդ շրջանի ավանդույթները, ձեռք բերեց նոր որակներ, և արտադրանքի տեսականին առավել ընդարձակվեց ի հաշիվ կենցաղային նոր կիրառության իրերի պատրաստման: Արծաթյա կենցաղային սպասքի (ափսեներ, գդալներ, ըմպանակներ, բաժակակալներ և այլն) առկայությունը հայկական քաղաքների արհեստավորա-առևտրական բնակչության բարձր դիրքի և կենսապայմանների ցուցիչ էր դարձել: Միևնույն ժամանակ ոսկերչական զարդերի բազ-մազանությամբ էր պայմանավորված նաև հայկական այս կամ այն տարածաշրջանի կնոջ տարազի շքեղությունն ու գրավչությունը: Տեխնիկա-տեխնոլոգիական և գեղազարդման առանձնահատկու-թյուններից ելնելով՝ հայկական ոսկերիչ-արծաթագործության մեջ կարելի առանձնացնել մի շարք դպրոցներ՝ Վան-Վասպուրականի, Կարինի (սրանից սերել են Կարսի, Ախալցխայի և Ալեքսանդրապոլ-Գյումրու դպրոցները), Փոքր Հայքի, Կիլիկիայի, Պարսկահայքի, Սյունիք-Արցախի և Երևանի: Յուրաքանչյուր ոսկերչական դպրոց մասնագիտացած և հմտացած էր արտադրանքի որոշակի տեսակի կամ էլ ոսկերչական տեխնիկայի որևէ բնագավառում: Ալեք-սանդրապոլում ոսկերչության և արծաթագործության հետ կապված և հարակից արհեստները լայն տարածում ունեին և բաժանվում էին նեղ մասնագիտացված ճյուղերի, որոնք հայտնի էին օտարալեզու

հետևյալ անվանումներով. ղույումջի-ոսկերիչ, զարգար-արծաթագործ, ղարաղույումջի-հասարակ մետաղներից զարդ պատրաստողներ և ջավահիրջի-ակնագործ: Նեղ մասնագիտացում-ները կապված են օգտագործվող մետաղի կամ պատրաստված իրերի տեսակի հետ: Արծաթյա կենցաղային սպասքի՝ ափսեներ, գդալներ, ըմպանակներ, բաժակակալներ, առկայությունը Ալեք-սանդրապոլի արհեստավորա-առևտրական բնակչության բարձր դիրքի և բարեկեցության ցուցիչ էին հանդիսանում: Միևնույն ժամանակ ոսկերչական զարդերի /ապարանջաններ, մանյակներ, քունքակախիկներ, մատանիներ, գոտիներ և այլք/ բազմամա-զանությամբ էին պայմանավորված նաև ալեքպոլցի կնոջ տարազի շքեղությունն ու գրավչությունը: Ալեքսանդրապոլի արծաթագոր-ծության ինքնօրինակ նմուշ են տղամարդու և կնոջ գոտիները, ինչպես նաև արծաթե և ոսկե ապարանջանները, որոնք էապես տարբերվում են հայկական մյուս ոսկերչական դպրոցների նմա-նատիպ զարդերից: Տղամարդու թամբաձև ճարմադով գոտին ներ-կայացնում էր Կարսի, իսկ կնոջ թելքաշ հատիկանախշով զարդար-ված գոտին Կարինի արծաթագործական ավանդույթը: Թիֆլիսի Հարգանշային գրասենյակում 1844-1913թթ. միջակայքում գրանցվել և գործելու իրավունք է ստացել շուրջ 174 վարպետ ոսկերիչ-արծաթագործ: Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործները օգ-տագործում էին հայտնի տեխնիկա-տեխնոլոգիական հետևյալ եղանակները՝ մոմե և կավե կաղապարներում ձուլում, դրվագում, կռում-կոփում, դրոշմում, թիթեղի գլանվածքի ստացում, թելքաշ-հատիկանախշում, նախշացանցավորում /ֆիլիգրան/, զուգաթելի նստեցում, թելերով հյուսում, հատիկներով զարդարում, փորա-գրում, ընդելուզում, ոսկեջրում, սևադապատում, ոսկեգույն կամ արծաթագույն համաձուլվածքների ստացում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ. Թ.
Պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ,
h.harutyunyan@ysu.am

ԿՈԽԱԾ ՊԱՆԻՐԸ ՇԻՐԱԿՑԻՆԵՐԻ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՊԱՆՐԱՏԵՍԱԿԻ ՏԱՐԲԵՐԱԿ

Կոխած պանրի պատրաստման, պահպանման գործընթացները, անունները զանազանվում են հայոց տարբեր տարածաշրջաններում: Այնուամենայնիվ, կան ընդհանրություններ, որոնք կփորձենք ի մի բերել և ներկայացնել զեկուցման ընթացքում:

Զեկուցման հիմքում ընկած են մեր հավաքած ԴԱՆ-երը՝ գրավոր աղբյուրներում եղած տվյալների համադրությամբ:

Զեկուցման **նպատակն է**՝ բացահայտել ***կոխած*** պանրի պատրաստման և պահպանման տարածաժամանակային ընդհանրություններն ու առանձնահատկությունները հայոց մեջ: Մեր **խնդիրներն են**՝ զանազանել ***կոխած*** պանրի տարբերակները:

Կներկայացնենք մեր կողմից գրանցված և գրավոր աղբյուրներից հայթայթված՝ պանրի այս տեսակն արտացոլող **բանահյուսական նմուշները**:

Ներկայացվող պանիրը պատրաստում են ինչպես կովի(***անքաշ***՝ չզտած, ***արդար*** կամ (***երեսը***) ***քաշած***՝ զտած), այնպես էլ ոչխարի (հատկապես անցյալում՝ այծի, գոմեշի) կաթից:

Մինչև վերջին տարիները ***կոխել են*** տարբեր չափի կավե ամանների, փայտե տակառիկների մեջ: Եթե պանիրը տեղավորել են գառան կամ ոչխարի մշակված կաշվի մեջ, պանրին տվել են ***մոթալ*** կամ ***տկի պանիր*** անունը:

Մեր օրերում նախընտրում են պանիրը ***կոխել*** ապակյա (երբեմն՝ պլաստմասայե) տարաների մեջ:

Լոռի կամ ***շոռի*** հետ խառնած ***կոխում են*** ոչ միայն ***քրլը, քյալլա***՝գլուխ, այլև ***չեչիլ*** պանիր: Որոշ գյուղերում, որտեղ ընդունված են պանրի վերոնշյալ տեսակները, դրանք հանդես են գալիս ***կոխած*** պանրի բաղադրիչներ: Երբ ***կոխում են*** միայն զտած պանիր, որպես բաղադրիչ գործածվում է նաև ***ռեժան***: ***Կոխած*** պանրի անուշ համն ու հոտն ապահովելու համար ավելացնում են ***բրդած*** կամ ամբողջական տերևներով կանաչիներ, խոտաբույսեր, կանաչ պղպեղ: Պանիրը ***կոխելուց*** հետո տարայի ***բերանը*** կտորով կապում են: Պատրաստի տարաները բերանքսիվայր (որոշ գյուղերում՝ ***կոդքի***) շրջում են ոչ խոնավ, չոր, զով մառանում, նկուղում՝ մոխրի, ժողովրդի լեզվով, ***փոշու*** (կամ ***փոշի*** լցրած ամանի) մեջ: Որոշ տնտեսուհիներ մոխիրը լցնում են հենց տարայի մեջ կտորը կապելուց առաջ, երբեմն, մոխրի փոխարեն՝ աղ, երբեմն՝ աղի և մոխրի խառնուրդը ***(երեսի*** շերտը մաքրում են նախքան գործածելը): Պարբերաբար փոխում են կտորն ու մոխիրը, մինչև կտորն այլևս չխոնավանա:

Պանրի դիմացկունության, երկարաժամկետ պահպանման գրավականը նաև խառնած լոռի, շոռի, սերուցքի մեջ աղի ճիշտ քանակությունն է: Այս ձևով պահած պանիրը մի քանի տարի կարող է դիմանալ, բայց սովորաբար ընդունված է բացել ձմռան գալուստին և սպառել մինչև գարուն, որպեսզի, այնուամենայնիվ, ***պանիրը ծանր հոտ չընկնի***:

ԱԶԱՐՅԱՆ Ա.
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
asiasya87@gmail.com

ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԵՂԱՆԱԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Երկրագործական, այգեգործական, անասնապահական տնտեսաձև վարող հայ ժողովրդի համար եղանակը կանխատեսելը կենսական անհրաժեշտություն է եղել։ Եղանակի կանխատեսման ժողովրդական հնարների մեջ մինչ օրս կարևոր տեղ են զբաղեցնում լուսատուների միջոցով իրականացվող կանխատեսումները։

Ձեկուցման հիմքում ընկած են մեր կողմից հավաքված դաշտային ազգագրական նյութերը, որոնք համադրել ենք գրավոր աղբյուրներում առկա նյութերի հետ։

Ձեկուցման նպատակն է.

- բացահայտել՝ ինչպե՛ս է հայ ժողովուրդը եղանակը կանխատեսել լուսատուների միջոցով,
- կանխատեսման ի՛նչ հնարներ է օգտագործել,
- ի՛նչ տարածվածություն է ունեցել կանխատեսման վերնշյալ եղանակը
- ո՛ր հնարներն են այսօր պահպանվել, որոնք՝ մոռացության մատնվել։

Կանխատեսման միջոց են հանդիսացել լուսինը, աստղերը, արևածագի և մայրամուտի ժամանակ արևից՝ երկնքի ստացած գույնը։ Օրինակ՝ ժողովրդի կարծիքով, հաջորդ օրը «լավ եղանակ» կլինի, եթե մայրամուտին երկինքը վարդագունած է։ Մոտալուտ սառնամանիքի կանխանշան է աստղերի պայծառությունը։

Ժողովուրդը կանխատեսում է նաև լուսնի փուլերով, ձևով, դիրքով։ Այսպես՝ եթե «լուսնի ծայրից հնարավոր է դույլ կախել», նշանակում է՝ արևոտ օրեր են լինելու, իսկ եթե ոչ՝ հաջորդ օրը անձրև է գալու։ Տնտեսական աշխատանքներով պայմանավորված՝ ժողովուրդն առավել կարևորել է լուսնային օրացույցը, քան՝ սեզոնայինը։ Տարեցներն այսօր էլ յուրահատուկ վերաբերմունք ունեն լուսնի միջոցով կանխատեսումներին. կանխատեսման այս եղանակին հավատում են անվերապահորեն։

Լուսատուների միջոցով եղանակի կանխատեսումները երկարատև զարգացում են ապրել. թեև մեր օրերում օդերևութաբանական կանխատեսումները հիմնվում են գիտական մեծ փորձի վրա և գրեթե ճշգրիտ տեղեկություններ են տալիս առաջիկա օրերի եղանակային տվյալների մասին, սակայն տնտեսական աշխատանքներում ընդգրկված մեծահասակներն այսօր էլ վստահում են կանխատեսման ավանդական միջոցներին, որոնք հիմնված են դարերի ընթացքում ձևավորված փորձի և հմտությունների վրա։

ԱՎԵՏԻՍՅԱՆ Մ.
Երևան քաղաքի պատմության թանգարան
meryavetisyan1984@gmail.com

ԵՐԵՎԱՆԻ ՀԱԽՃԱՊԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԻՆ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ

Երևանի հախճապակու գործարանի աշխատակազմում երկու կին արվեստագետների՝ Հռիփսիմե Սիմոնյանի և Թերեզա Միրզոյանի ներկայությունը նոր շունչ և որակ հաղորդեց գործարանի

արտադրական ընթացքին։ Մոնումենտալ քանդակագործության մեջ իրենց տաղանդը բացահայտած արվեստագետ կանայք կարոդացան մանր քանդակում ևս ներկայանալ որպես անկախ մտածող և կարծրատիպեր ջարդող արվեստագետներ, որոնք Երևանի հախճապակու գործարանում մասսայական արտադրության համար էսքիզավորեցին սպասքի և մանրաքանդակ արձանիկների նմուշներ։ Ուսումնասիրության նպատակն է անդրադառնալ ՀԽՍՀ ժողովրդական նկարչուհի, Հայաստանում դեկորատիվ կիրառական արվեստի հիմնադիր, խեցեգործ-քանդակագործ Հռիփսիմե Սիմոնյանի և ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ Թերեզա Միրզոյանի Երևանի հախճապակու գործարանում ծավալած գործունեությանը։ Անդրադարձ է կատարվել նրանց էսքիզավորմամբ գործարանում արտադրված «Ուզունդարա պարը» և «Բալետի պարուհին» հախճապակե արձանիկներին, որոնց կերպարային վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել սոցիալ-մշակութային մի շարք հարցեր։ Ուսումնասիրության շեշտադրումներից մեկն էլ այն է, որ փորձ է արվել վերը նշված մանրաքանդակ-արձանիկների միջոցով ցույց տալ արվեստագետ կանանց ստեղծագործական մտքի, ասելիքի առանձնահատկությունները։

ՄԱԽՍՈՒԴՅԱՆ Ա.
Հ. Շարամբեյանի անվան Երևանի ժողովրդական
արվեստի թանգարան
astghik.makhsudyan@gmail.com

ՆՇԱՆԱԽՇԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Նշանախշը լայն տարածում ունեցող հարդատարր է, որ բնորոշ է աշխարհի շատ ժողովուրդներին և սիրված է նաև հայկական մշակույթում, մասնավորապես՝ ժողովրդական արվեստում: Զեկուցումը նվիրված է նախշի հայկական դրսևորումներին, դեկորատիվ-կիրառական արվեստի տարբեր ճյուղերում դրա ունեցած արտահայտչաձևերին: Վերջինս կազմելիս օգտվել ենք թանգարանային և անհատների հավաքածուներից, ոլորտին վերաբերող գրականությունից, համացանցային աղբյուրներից՝ տալով նմուշների համեմատական վերլուծություն: Առանցքային դեր են զբաղեցնում Հովհաննես Շարամբեյանի անվան Ժողովրդական արվեստների թանգարանի նմուշները: Զեկուցման շրջանակում մասնավորապես քննել ենք գեղարվեստական գործվածքի (գորգ, կարպետ, ասեղնագործություն, դաջարվեստ), մետաղի գեղարվեստական մշակման (պղնձագործություն, արծաթագործություն, ոսկերչություն) և փայտի փորագրության ճյուղերը: Անդրադարձ է կատարվել նաև նշանախշի ծագումնաբանության, խորհրդաբանության հիմնախնդիրներին:

ՊՈՂՈՍՅԱՆ Ս.
Պատմական գիտությունների թեկնածու
Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր,
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի
պատմության ազգային թանգարան
sv_ethnomuseum@yahoo.com

ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՎԱԾՔԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Զեկուցումը նվիրված է հատկապես Շիրակի մշակույթում տարածված պատկերային գործվածքի նմուշներում կնոջ պատկերագրության ուսումնասիրմանը: Որպես աղբյուր օգտագործվել են արխիվային, թանգարանային նյութեր: Կիրառվել են պատմահամեմատական և վերլուծության մեթոդները:

Հայաստանյան ազգագրական բնույթի ամենախոշոր թանգարանում՝ Հայոց ազգագրության թանգարանի գործվածքի բազմաքանակ հավաքածուում, առանձնանում են «Մայր Հայաստան» անվամբ պատի զարդերը և պատկերագորգը: Ուշագրավ է 1908 թվականին Ալեքսանդրապոլում և 1929 թվականին արդեն Լենինական դարձած քաղաքում գործված գործվածքների համեմատական բնութագիրը: Ըստ էության, այս երկուսն էլ կատարված են նույն հորինվածքով. մեկը՝ 20-րդ դարասկզբին, մյուսը՝ խորհրդային շրջանում: Դրանց համար հիմք է հանդիսացել Ճանիկ Արամյանի 1960 թվականի «Դասարան Հայկազն մանկանց» խորագրով դասագրքում ներկայացված «Մայր Հայաստան» անվանված սև-սպիտակ գծանկարը: Դրան կից ներկայացված են Պատմական Հայաստանի քարտեզը և «Ոգի Հայաստանեայց» նկարը՝ երիտասարդ գեղանի կնոջ քողազարդ պատկերով: Պահպանված է նաև Վարշավայում 1905

թվականին տպագրված էսքիզի օրինակ: Հետաքրքիր է, որ «Ոգի Հայաստանեայց» անունը պահպանվել է, Արամյանի համանուն նկարը տարածում չի ստացել:

Առաջին մոտիվը 1860-ական թվականներից հետո բավական տարածում է ստանում հայկական դեկորատիվ կիրառական արվեստի տարբեր ճյուղերում՝ «Մայր Հայաստան» կամ «Ոգի Հայաստանի» անուններով՝ գեղարվեստական գործվածքի, արծաթագործության մեջ:

ԱՍԱՏՐՅԱՆ Կ.
Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր,
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի
պատմության ազգային թանգարան
sardarapat01.22@gmail.com

ԾԽԱԽԱՏԱՏՈՒՓԸ ՈՐՊԵՍ ԸՆԾԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑՈՒՑԻՉ

Ծխախոտատուփը ուշմիջնադարյան և նոր ժամանակների կիրառական պարագաներից էր, որը, կենցաղային առարկա լինելուց զատ, հանդես էր գալիս սոցիալ-հասարակական կյանքում և քաղաքական-դիվանագիտական հարթակներում: Առարկայի կիրառությունը հասարակության տարբեր խավերի շրջանում ժամանակի հոլովույթում այն վերածել էր յուրօրինակ խորհրդանիշի. թանկարժեք և հարգի նվեր, պերճանքի առարկա և սոցիալական կարգավիճակի ցուցիչ:

Զեկուցումը նպատակ ունի վեր հանել և ներկայացնել ծխախոտատուփի նշանակությունը տարբեր մշակույթներում, այդ թվում՝ հայոց մշակույթի մեջ՝ պատմության տարբեր շրջափուլերում, քանի որ ժամանակի մեջ առարկայի նկատմամբ վերաբերմունքը տարբերարկված բնույթ ուներ՝ կապված նորաձևության և տվյալ հասարակության ընկալումների ու պատկերացումների հետ, ինչպես նաև թելադրվում էր պատվիրատուի և պատրաստող վարպետի գեղագիտական ճաշակով և նախընտրություններով։

Աշխատանքում օգտագործել ենք համեմատական վերլուծության մեթոդը՝ Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան»-ում (այսուհետ՝ Հայոց ազգագրության թանգարան, ՀԱԹ) պահպանվող, 19-20-րդ դդ. թվագրվող ծխախոտատուփերը համեմատելով տարբեր մշակույթներում պատրաստված և յուրովի հանդես եկող ծխախոտատուփերի հետ, համակողմանի ներկայացնելով դրանց հաղորդված իմաստաբանական բովանդակությունը։

ԱՎԱԳՅԱՆ Ի.
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան
inga.avagyan.76@mail.ru

Կ.Գ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻ «ՏԱՍՆՀԻՆԳ ՏԱՐԻ ԴԺՈԽՔԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՎ (1941-1956ԹԹ.)» ՀՈՒՇԱՊԱՏՄԱՆ ՇՈՒՐՋ

Նշանավոր բանասեր Կարապետ Դուրգարյանը մեծանուն գիտնական, բանահավաք և ազգագրագետ Աղեքսանդր Մխիթարյանցի թոռն է: Կ. Դուրգարյանի մահից հետո (1988թ.) նրա կինը՝ Եկատերինա Դուրգարյանը, Աղ. Մխիթարյանցի արխիվի հետ բանասերի արխիվը նույնպես հանձնել է «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանին: Կ. Դուրգարյանի արխիվը բաղկացած է փաստաղթերից, լուսանկարներից, բանաստեղծություններ ամփոփող ձեռագիր գրքույկներից և հուշապատումից: Այսօր, երբ Գյումրու մտավորականությունը հատկապես հետաքրքրված է Կ. Դուրգարյանի հուշապատմամբ, արդիական ենք համարում հոդվածաշարով այն ներկայացնել հայ հասարակությանը: Հուշապատումը գրվել է 1967 թ. Լենինականում և պատում է Կ. Դուրգարյանի 1941-1956թթ. ապրած կյանքի տարիների մասին: 1965թ. ազգային զարթոնքից հետո հայ մտավորականների մեջ միտում է նկատվում գրել թե՛ Հայոց ցեղասպանության, թե՛ Ստալինյան բռնաճնշումների, թե՛ Հայրենական պատերազմի մասին: Այս հորձանուտի մեջ է հայտնվում նաև մտավորական Կ.Դուրգարյանը, որ իր հուշապատումը վերնագրում է «Տասնհինգ տարի դժոխքի ոլորտներով (1941-1956թթ.)»: Վերնագիրը խոսում է այն տառա-

պանքների մասին, որոնցով անցել է հայ մտավորականը հայտնվելով խորհրդային բանտերում և ենթարկվելով բռնաճնշումների: Հուշապատումը բաղկացած է երեք ձեռագիր գրքերից, որոնք ամփոփում են մոտ 700 էջ, ուստի սույն հոդվածի շրջանակներում հնարավոր է սեղմ անդրադառնալ միայն հուշապատման առաջին գրքին, որն սկսվում է Ավետիք Իսահակյանի և Եղիշեի խոսքերով: «Պարտական էղնիս, թե չգրես…» խոսքերը պատկանում են Ավ. Իսահակյանին, որից ենթադրում ենք, որ Դուրգարյանը հուշապատումը գրել է Վարպետի խորհրդով, ապա Եղիշեի խոսքերն են՝ «Ահա ոչ ըստ կամաց արտօստրալիր ողբովք…»: Հուշապատման «Գիրք առաջինը» ամփոփում է 1941-1944 թթ., բաղկացած է 22 գլուխներից և 481 էջից: Գիրքն ունի «Բովանդակություն» բաժինը, որի վերջնամասում հեղինակը գրում է, որ առաջին գրքի շարադրանքը ավարտել է 1969 թ. դեկտեմբերի 5-ին, հետևաբար առաջին գրքի շարադրանքը տևել է մոտ երեք տարի: Առաջին տողերից էլ պարզ է դառնում այն հանգամանքը, թե ինչու Կ. Դուրգարյանը իր վերապրած տարիները համեմատում է դժոխքի հետ. «Դժոխքը, որի ոլորտներով անցել են միլիոնավոր մարդիկ, շատերն անդարձ ու անվերադարձ, հիմնականում տարբերվում է քրիստոնեական կամ կրոնական հասկացությամբ ստեղծված մտացածին դժոխքից,- գրում է նա, -նախ այս դժոխքը իրական է, ստեղծված երկրի վրա, ուր մարդիկ ապրում են մեռնելով, ապրում են սարսափով, խոսում են սարսափով, քնում են սարսափով: Բացի դրանից, քրիստոնեական դժոխքը հորինված է մեղավորների համար, իսկ սա անմեղների, արդարների, ազնիվ մարդկանց համար… Ընդհանուրն այն է, որ երկու դժոխքներն էլ տանջանքի համար են»: Ահա այսպես է բնորոշում նա այս շրջանում ապրող մտավորականի կյանքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ

Շիրակի ջրանցքի կառուցումը. արխիվային և դաշտային նյութի համեմատական քննություն.....5

ԲԱՋԵՅԱՆ ԿԱՐԻՆԵ

Լենինականի կանանց նոր մասնագիտությունները հանրային արտադրության մեջ 1920-1940-ական թթ.....6

ԲՈՅԱՋՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

Լենինական-Գյումրիի բնակչության թվի շարժընթացը 1924-2024թթ.....8

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ Հ.

Լենինականի քաղաքային ժողովրդական երգը երաժշտագետ Հ. Ափինյանի գրառումներում.....10

ԱՂԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը XIXդ.-XXդ.սկզբին (համառոտ ուրվագիծ).....12

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ Թ.

Կոխած պանիրը շիրակցիների կենսապահովման մշակույթում՝ որպես հայոց ավանդական պանրատեսակի տարբերակ……14

ԱՋԱՐՅԱՆ ԱՍՊՐԱՄ

Լուսատուների միջոցով եղանակի կանխատեսան ժողովրդական հնարները հայոց մեջ……...….16

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԵՐԻ
Երևանի հախճապակու գործարանի կին արվեստագետները.....17

ՄԱԽՍՈՒԴՅԱՆ ԱՍՏՂԻԿ
Նշանախշը հայկական ժողովրդական արվեստում.....19

ՊՈՂՈՍՅԱ ՍՎԵՏԱ
Կնոջ կերպարը հայկական գեղարվեստական
գործվածքի պատկերագրության մեջ……..…….20

ԱՍԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
Ծխախատատուփը որպես ընծա և սոցիալական ցուցիչ……..…21

ԱՎԱԳՅԱՆ ԻՆԳԱ
Կ. Գ. Դուրգարյանի «Տասնհինգ տարի դժոխքի ոլորտներով
(1941-1956թթ.)» հուշապատման շուրջ.....23